



ԱՆԴԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որո՞նք են Ձեր առողջապահական իրավունքները:

Դուք իրավունք ունեք իմանալու:

- Իմանալու Ձեր իրավունքները և պարտականությունները:
- Իմանալու Ձեր ծառայությունների, բժիշկների և մասնագետների մասին և տեղեկացվելու, երբ Ձեր «Care1st Health Plan»-ն այլևս պայմանագիր չկնքի Ձեր բժշկի հետ:
- Իմանալու մեր բոլոր մյուս բուժապասարկողների մասին:
- Ձեր բժշկական տվյալները տեսնելու հնարավորություն ունենալու: Դուք պետք է կատարեք այդ կապակցությամբ գործող նահանգային և դաշնային օրենքների պահանջները:
- Անկեղծ գրույց ունենալու Ձեր բժշկի հետ Ձեր հիվանդության բուժման բոլոր տարբերակների մասին, անկախ դրանց գնից և ապահովագրության կողմից վճարվելու հանգամանքից:

Դուք իրավունք ունեք լավ վերաբերմունքի արժանանալու:

- Միշտ հարգալից վերաբերմունքի արժանանալու:
- Երաշխավորում ստանալու, այն մասին որ մեր առողջապահական ծրագրի ոչ մի աշխատակից չի միջամտի Ձեր անձնական կյանքին:
- Իմանալու, որ մենք գաղտնի ենք պահում Ձեր մասին բոլոր տեղեկությունները:

Դուք իրավունք ունեք ինքներդ տնօրինելու Ձեր բուժապասարկումը:

- Ընտրելու Ձեր նախնական բուժապասարկողին:
- Հրաժարվելու Ձեր նախնական բուժապասարկողի կամ այլ բուժապասարկողների կողմից առաջարկվող խնամքից:
- Հնարավորություն ունենալու ընտրություն կատարել Ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ:
- Կենդանի կտակ կազմելու (որը կոչվում է նաև նախնական ցուցումներ):
- Գանգատ կամ բողոք ներկայացնելու «Care1st»-ի կամ նրա տրամադրած ծառայությունների վերաբերյալ, այդ թվում՝ գանգատ ներկայացնելու այն բանի համար, որ Ձեզ ծառայություններ չեն տրամադրվում Ձեր պահանջած լեզվով:

Դուք իրավունք ունեք մի շարք ծառայություններ ստանալու:

- Ընտանիքի պլանավորման ծառայություններ ստանալու:
- Բուժկանխարգելիչ ծառայություններ ստանալու:
- Անչափահասների համաձայնության ծառայություններ ստանալու:
- Բուժվելու սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից (STD-ներ):
- Շտապ օգնություն ստանալու մեր հիվանդանոցների ցանցի մեջ չմտնող հիվանդանոցում:
- Բուժապասարկում ստանալու դաշնային հավաստագրում ունեցող առողջապահական կենտրոնի կողմից (FQHC):
- Բուժապասարկում ստանալու հնդկացիական բուժկենտրոնում:
- Երկրորդ բժշկի կարծիք ստանալու:

- Անվճար թարգմանչական ծառայություններ ստանալու, այդ թվում՝ խուլերի համար նախատեսված ծառայություններ:
- Ձեր պահանջով՝ նյութեր ստանալու տարբեր լեզուներով, տարբեր միջոցներով և խոշորատառ տպագրությամբ:

Դուք իրավունք ունեք մեր առողջապահական ծրագրում փոփոխություններ կատարելու մասին առաջարկ ներկայացնելու:

- Հայտնելու մեզ, թե ինչը Ձեզ դուր չի գալիս մեր առողջապահական ծրագրում:
- Հայտնելու մեզ, թե ինչը Ձեզ դուր չի գալիս Ձեր ստացած բուժսպասարկման հարցում:
- Հարցականի տակ առնելու Ձեր բուժսպասարկման մասին մեր կողմից ընդունված որոշումները:
- Հայտնելու մեզ, թե ինչը Ձեզ դուր չի գալիս Ձեր իրավունքների և պարտականությունների մասին մեզ մոտ գործող կարգի հարցում:
- Անկողմնակալ դատական ունկնդրություն պահանջելու Սոցիալական ծառայությունների դեպարտամենտից:
- Անկախ բժշկական քննություն պահանջելու Կառավարվող առողջապահական խնամքի դեպարտամենտից:
- Դուրս գալու մեր առողջապահական ծրագրից:

Որո՞նք են Ձեր պարտականությունները, որպես առողջապահական ծրագրի անդամ

Մենք հույս ունենք, որ Դուք կհամագործակցեք Ձեր բժշկի հետ Ձեր բուժսպասարկման հարցում:

- Այցելություն կատանաք Ձեր բժշկի մոտ ծրագրի նոր անդամ դառնալուց հետո 120 օրվա ընթացքում՝ նախնական առողջապահական գնահատման համար:
- Ձեր բժշկին կպատմեք այն ամենն, ինչ նրան անհրաժեշտ է իմանալ՝ Ձեզ բուժելու համար:
- Ձեր առողջության մասին կիմանաք այն ամենն ինչն ի վիճակի եք:
- Կհետևեք այն բուժման ծրագրին, որը նշանակվել է Ձեզ՝ Ձեր և Ձեր բժշկի փոխադարձ համաձայնությամբ:
- Կհետևեք Ձեր բժշկի ցուցումներին և հոգ կտանեք Ձեր առողջության մասին:
- Կանեք այն ամենն ինչը թույլ չի տալիս Ձեզ հիվանդանալ:
- Ձեր բժշկին այցելելուց Ձեզ հետ կբերեք Ձեր ID քարտը:
- Հարգանքով կվերաբերվեք Ձեր բժշկին և մյուս բուժսպասարկողներին:
- Շտապ օգնության սենյակից կօգտվեք միայն շտապ օգնության անհրաժեշտության դեպքում: Ձեր բժիշկը Ձեզ կտրամադրի Ձեզ անհրաժեշտ բուժսպասարկման մեծ մասը:
- Կհայտնեք մեզ խարդախության դեպքերի մասին:

Մենք ցանկանում ենք, որ Դուք հասկանաք Ձեր առողջապահական ծրագիրը:

- Իմանաք Ձեր առողջապահական ծրագրի կանոնները և հետևեք դրանց:
- Իմանաք, որ մեր առողջապահական ծրագիրը և Ձեր սպասարկումը կատարվում է գործող օրենքների համաձայն:

- Իմանաք, որ մենք չենք կարող Ձեզ տարբեր բուժում տրամադրել՝ Ձեր տարիքի, սեռի, ռասայական կամ ազգային պատկանելիության, մշակույթի, լեզվական պահանջների, սեռական կողմնորոշման և/կամ առողջական վիճակի պատճառով: